

634
m-11
այ

ԲԵՐԲԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ ԺՈՂՎՈՍԽՈՐՀԻ ՑԵՎ ՀԱՄ Կ/Բ) Կ ԿԿ Ի
1932 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Շնորհիվ կուլեկտիվացման հաջողութունների, կոլտնտեսա-
կան գյուղացիութունը հիմնական գյուղատնտեսական շրջաննե-
րում միացրել և առաջներում անհատարար ուղտադորձվող հողի
80—90 տոկոսը: Անհատական տնտեսութունների մանր հողաչե-
տերն իրենց հեռավորութամբ, միջնակներով, մշտական վերա-
բաժանումներով, այժմ կոլտնտեսական գյուղացիության կողմից
միացվելով վեր են ածվել խոշոր մասիվների: Կազմակերպված և
խորհրդատնտեսութունների ուժեղ ցանց: Գյուղատնտեսութունն
ստացել և 100 հազարից ավելի տրակտորներ:

Այս ամենի հետևանքով ցանխատարածութունները ԽՍՀՄ-ում,
նախապատերազմյանի համեմատութամբ, ավելացել են
30 միլիոն հեկտարով, մանավանդ տեխնիկական ու շարահերկ
կուլտուրաների և խոտաբույսերի դժով:

Բայց այստեղից հետևում և, վոր ցանքատարածութուններն
ընդարձակված են բավարար չափով, և գյուղատնտեսութան վե-
րելքի առաջին ստադիայի նպատակը—ցանքատարածութուննե-
րի մեծագույն ընդարձակումը—արդեն իրագործված և: Ամենից
ավելի աշխատանք պահանջող տեխնիկական և շարահերկ կուլ-
տուրաների ցանքատարածութունների հետագա ընդարձակումը
պատճառ կդառնար բանովի և քարչող ուժի ծայրաստիճան դե-
բորենման, մշակման վորակի վատթարացման և բերքատու-
թյան անկման: Այս նշանակում և, թե հասել և ժամանակը,
յերբ ցանքատարածութուններն ավելացնելու միջոցով տնտեսա-
բյուրն ընդլայնելուց անհրաժեշտ և շրջադարձ կատարել դեպի
հողի լավագույն մշակման համար տարվող պայքարը, դեպի բեր-
քատուրյան բարձրացման համար տարվող պայքարը, վորը զար-
գացման ուլյալ ստադիայում հանդիսանում և գլխավոր և կենտրո-

Տեխնիկական խմբագիր՝ Մ. Եփրիկ
Սրբագրիչ՝ Ա. Տեր-Միքայելյան
Համանված և արտադրության 25 փետրվարի 1933 թ.
Ստորագրված և տպագրելու 10 մարտի 1933 թ.
Տիրաժ 10.000. Հրատ. № 58 124.000 տպ. թշ.
Պետհրատի տպարան. Պատվեր № 550. Գլավկոտ № 7791 (բ)

Նախան խնդիր: Խոշոր, սոցիալիստական տնտեսութեան առավելութիւնները լիակատար հնարավորութեան են տալիս խորհրդային տնտեսութեանը և կոլտնտեսութեանը բերքատուութիւնը բարձրացնել այնպիսի չափով, վերալիսին անմատչելի յետանապաստան տնտեսութեան համար:

Այս առնչութեամբ ԽՍՀ Միութեան Ժողովրդական կոմիտեաների խորհուրդը և ՀամԿ (բ)Կ կենտրոնական կոմիտեն վորդում են.

1. Դադարեցնել տեխնիկական ու շարահերկ կուլտուրաների ցանքատարածութիւնների հետագա ընդարձակումը 1933 թվի պլանով և ցանքատարածութեան ընդարձակումը նպատակահարմար համարել միայն հացահատիկային կուլտուրաների դժով (գըլ-խավորապէս ցորենի, վարսակի, դարու):

2. 1933 թվի դարնանացանի պլանը սահմանել $97\frac{1}{2}$ միլիոն հեկտար (այս տարւանից մեկ միլիոն հեկտար ալիւլի) այն հաշվով, վոր ցորենի վարսակի և դարու ցանքսի տարածութեան ավելանա $2\frac{1}{2}$ միլիոն հեկտարով, վորից մեկ միլիոն հեկտարը ցանքատարածութեան 1933 թվի ընդհանուր աճման հաշվին, իսկ $1\frac{1}{2}$ միլիոն հեկտարը՝ մյուս, պակաս կարևոր կուլտուրաների դուրս մղելու հաշվին:

3. Գյուղատնտեսութեան ասպարիղում աշխատող բոլոր կուլտուրային, կոմյերիտական և տնտեսական կազմակերպութեանների աշխատանքը փոխադրել անխտիր բոլոր կուլտուրաների բերքատուութեան բարձրացման ուղղութեամբ՝ իրրև դյուր գատնտեսութեան զարգացման կենտրոնական խնդիր տվյալ մոմենտում:

4. Հանձնարարել ԽՍՀ Մ Հողօդկոմատին 1933 թվի ընթացքում բոլոր խորհրդային տնտեսութեաններում և կոլտնտեսութեաններում ցանքաշրջանառութեան մտցնել՝ իրրև բերքատուութեան բարձրացման լավագույն միջոցներից մեկը, սակայն այն հաշվով, վոր ցանքաշրջանառութեան մտցնելը շահկապով վորոշ մարդերում և յերկրներում հացահատիկային հասկային կուլտուրաների ցանքատարածութեանը համապատասխան չափով ընդարձակելու հետ:

5. 1933—1934 թվին հացահատիկային կուլտուրաների տեսակավոր ֆունդը հասցնել 100 միլիոն փիթի, այդ թվում 40 միլիոն փութ պետական և 60 միլիոն փութ ՄՏ կայանների միջկոլտնտես-

սական փոխանակային ֆոնդում, հանձնարարելով ԽՍՀ Մ Հողօդկոմատին սահմանել սերմնային շրջանացում և մշակել մաքուր տեսակի սերմերի ցանքի անցնելու միջոցառումներ ըստ կուլտուրաների ու շրջանների:

6. Հանձնարարել Հողօդկոմատին և Ծանրարդօդկոմատին յերկու շարքովա ընթացքում ԽՍՀ Մ Ժողկոմխորհին կոնկրետ առաջարկներ ներկայացնել 1933 թվին տեխնիկական և կրկնաէրկ կուլտուրաների մեքենայացման համար անհրաժեշտ քանակութեամբ մեքենաներ արտադրելու մասին, իրրև բերքատուութեան բարձրացման լավագույն միջոցներից մեկի:

7. Հանձնարարել ԽՍՀ Մ Հողօդկոմատին և Ծանրարդօդկոմատին յերեք շարքովա ընթացքում ԽՍՀ Մ Ժողկոմխորհին ներկայացնել առաջարկ բերքատուութեան բարձրացման համար անհրաժեշտ ֆիւիական պարարտանյութերի, մանաւանդ աղոտային պարարտանյութերի արտադրութեան ուժեղացնելու մասին:

8. Հանձնարարել ԽՍՀ Մ Հողօդկոմատին և Տրակտորկենտրոնին մեքենա-տրակտորային կայանների աշխատանքն այնպէս վերակառուցել, վոր բերքատուութեան բարձրացման համար սլայքարելու խնդրին յենթակա դարձվի ՄՏ կայանների ընթացիկ աղբո-արտադրական աշխատանքը, նկատի ունենալով, վոր մեքենա-տրակտորային կայանները պետք է դառնան կոլտնտեսութեանների ղեկավարները վոչ միայն տրակտորային տեխնիկայի կիրառման ասպարիղում, այլև ագրոնոմիայի ասպարիղում:

ԽՍՀ Միութեան Ժողովրդական կոմիտեաների խորհրդի նախագահ՝
Վ. ՄՈՒՍՏՈՎ (ՄԿՐՅԱԲԻՆ)
Համ Կ(բ)Կ կենտրոնական կոմիտեի քարտուղար՝ Ի. ՍՏԱԼԻՆ

2

ԱՆԳՐԿՈՎԿԱՍԻ ԳՅՈՒՂԱՏՆՅԵՄՈՒԹՅԱՆ ԲԵՐԲԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՂՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՍՖԵՆԸ ԺՈՂՈՍՄԻՈՐՆԻ ՅԵՎ ՆԱՄ Կ(Բ)Կ ԱՆԳՐՅԱՐԿՈՍԻ
1932 թ ՆՈՆԵՄԲԵՐԻ 16-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Առաջին հնգամյակի հետևանքով ԱՍՖԵՆԸ-ի դյուրգատնտեսութեան մեջ ձեռք են բերված խոշորագույն հաջողութեաններ՝ կոլտնտեսութեաններն ընդգրկել են դյուրացիական տնտեսութեանների 41 տոկոսը, խորհրդային տնտեսութեանների թիւր հասել է 300 միավորի, կազմակերպված է 49 ՄՏԿ, զգալի չափով մուտք են գործել ու արմատացել կատարելագործված դյուրգատնտեսական

մեքենաները: Տրակտորային պարկի կարողութունը 1932 թվին կազմել է մինչև 54,000 ձիու ուժ, տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունը նախապատերազմյանի դիմաց ավելացել է 2½ անգամ, զգալիորեն ընդարձակվել է դիտահետազոտական ինստիտուտների, զոնալ կայանների, գյուղատնտեսական ԲՈՒՀ-երի, տեխնիկոմների ցանցը և այլն, զգալի հաջողություններ են ձեռք բերված կուլտնտեսությունների, խորհրատնտեսությունների և ՄՏԿ-ների կազմակերպչական-անտեսական ամրացման գործում և այլն:

Սրան զուգընթաց, ԱՍՖՈՀ-ի Ժողովրդական կոմիսարներին խորհուրդը և ՀամԿ (բ)Կ Անդրեյերկոմը նշում են, վոր վերջին տարիներս գյուղատնտեսության զարգացման վորակական ցուցանիշները, առաջին հերթին բերքատվության ցուցանիշները սխտեմատիկ կերպով հետ են մնում: Ծնորհիվ նրա, վոր հողային և կուլտնտեսական որգանները (հողթողկոմատները, կուլտնտեխնությունները, տրակտորիկները, դիտահետազոտական ինստիտուտները) անուշաղիբ վերաբերմունք են ցույց տալիս բերքատվության հարցերին, վերջին տարիներս ԱՍՖՈՀ-ի գյուղատնտեսության մեջ զգալիորեն իջավ մի շարք հիմնական կուլտուրաների բերքատվությունը (բամբակինը՝ ՀՍՈՀ-ում, ծխախոտինը՝ Վրաստանում, հացահատիկինը՝ ամբողջ Անդրկովկասում):

Այդ դրությունը բացառապես անթույլատրելի համարելով և նկատի ունենալով, «վոր արդեն հասել է ժամանակը, յերբ ցանքատարածություններն ավելացնելու միջոցով տնտեսությունն ընդարձակելուց անհրաժեշտ է շրջադարձ կատարել դեպի հողի լավադույն մշակման համար տարվող պայքարը, վորը զարգացման տվյալ ստադիայում հանդիսանում է դիտավոր և կենտրոնական խնդիր» (ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի վորոշումից), ԱՍՖՈՀ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Անդրեյերկոմը վորոշում են.

1. 1933 թվի դարնանացանի համար սահմանել հետևյալ ցանքատարածությունները (հաղար հեկտարներով).

| | ԱՍԽՀ | ՀՍԽՀ | ՎՍԽՀ | ԱՍՍԽՀ |
|--|-------|-------|-------|-------|
| 1. Տեխնիկական կուլտուրաներ | 09,5 | 36,3 | 50,8 | 296,6 |
| Այդ թվում բամբակ | 191,2 | 25,8 | 19,0 | 236,0 |
| ծխախոտ | 3,0 | 2,5 | 18,0 | 23,6 |
| 2. Բանջարանոցային կուլտուրաներ | 50,5 | 18,5 | 39,3 | 108,3 |
| 3. Հացահատիկային (զարնանոցան) | 122,0 | 245,4 | 518,2 | 895,6 |
| 4. Կերային | 43,2 | 26,7 | 36,9 | 106,8 |

2. Առաջարկել հանրապետությունների Ժողկոմխորհուրդներին, կուլտնտեսություններին և Անդրհողթողկոմատին՝

ա) մինչև 1933 թ. հունվարի 1-ը ապահովել խորհրատնտեսությունների արտադրական-Ֆինանսական պլանների կազմումը.

բ) մինչև 1932 թ. դեկտեմբերի 15-ը վերջացնել կուլտնտեսությունների 1933 թ. արտադրական-Ֆինանսական պլաններ կազմելու նախապատրաստական աշխատանքներն այն հաշվով, վոր պլանները կազմելու և քննարկելու աշխատանքը կուլտնտեսություններում ավարտվի ամենաուշը 1933 թ. փետրվարի 1-ին.

գ) մինչև 1933 թ. հունվարի 1-ը վերջացնել տիպարային շրջանային ցանքաշրջանառությունների մշակումը, առաջին հերթին բամբակի, ծխախոտի և անասնապահական շրջաններում, ապահովելով նրանց լայն քննարկումը խորհրատնտեսությունների և կուլտնտեսությունների արտադրական խորհրդակցություններում մինչև 1933 թ. փետրվարի 1-ը. մշակել կոնկրետ ցանքաշրջանառություն յուրաքանչյուր արտադրական միավորի համար և ապահովել նրանց կիրառումը նատուրայով:

Ցանքաշրջանառություն անցկացնելիս հաշվի առնել հացահատիկային և կերային կուլտուրաների, հատկապես լյուցերնայի ընդարձակումը բամբակացան շրջաններում: Հատուկ ուշադրություն դարձնել տերիտորիայի կազմակերպման հարցերին—կուլտնտեսություններում ցանքաշրջանառության արմատական կապակցութամբ կիրառվող հողաշինարարական աշխատանքներին:

3. Հանրապետությունների Ժողկոմխորհուրդներին և կուլտնտեսություններին՝ ապահովել սերմֆոնդերի հավաքումն և պահպանումը խորհրատնտեսություններում և սերմֆոնդերինն ու ապֆոնդերինը՝ կուլտնտեսություններում և անհատական տնտեսություններում, յուրաքանչյուր հանրապետության համար սահմանված չափերով: Մշակել այնպիսի միջոցառումների սխտեմ, վորոնք ապահովեն սերմացուի և ապահովադրական ֆոնդերի ժամանակին հավաքումը 1933 թվի բերքից, նրանց պատշաճ պահպանումը և պարբերական նորոգումը, ինչպես նաև ժամանակին վերադարձնելը՝ այդ ֆոնդերից փոխ վերցնելու դեպքում:

4. Անդրհողթողկոմատին և հանրապետական հողթողկոմատներին՝ մեկ ամսվա ընթացքում մշակել և Անդրհողկոմխորհին

ներկայացնել գյուղատնտեսութեան արտադրական սպասարկման կառուցման սլանը, ընդ դմին նախատեսելով ստորին աղբոցանցի ամրացումը և շրջհողրաթիւնների ղեկավար դերի ուժեղացումը:

5. Պարտավորեցնել հանրապետութեան հողօգտագործողներին՝

ա) մեկ ամսվա ընթացքում ավարտել սեւեղելի կայանների կազմակերպումը, նրանց ապահովելով անհրաժեշտ հողային տերիտորիայով և հենակետերի ցանցով, ինչպես և առանձնապես քննարկել առաջին վերարտադրման սերմերի սեւեղելի, տեսակների փորձարկման և արտադրութեան ուղղութեամբ 1933 թվին կատարելիք աշխատանքների սլանը:

բ) 1933 թվի սերմնարուծութեան, տեսակների փորձարկման և տեսակավոր ցանքերի գծով մեկ ամսվա ընթացքում վերանայել սերմարուծական խորհրդատնտեսութեան և կոլտնտեսութեան ցանցը, մշակել կոլտնտեսութեան սերմնարուծութեան զարգացումն ապահովող միջոցառումներ, կազմակերպել սերմերի բոլոր տեսակների (ելիտային նյութի, առաջին, յերկրորդ և յերրորդ վերարտադրման) արտադրանքի ստացման և ծախսման հաշվառումը, առանձնապես մշակել սեւեղելի գերի կազմակերպման 1933 թ. սլանը:

գ) միջոցներ ձեռք առնել 1933 թվին փոխադրելիք հանքային պարարտանյութերի կոնտինգենտը տեղավորելու ըստ առանձին կազմակերպութեանների, ապահովելով տնտեսական կազմակերպութեանների և Հանքային պարարտանյութերի համաժողովնական ընկերութեան միջև հանքային պարարտանյութերի փոխադրման շուրջը պայմանագրերի կնքումը, ինչպես նաև հանքային պարարտանյութերի ստացման սկզբին պահեստների կառուցման ավարտումը և հանքային պարարտանյութերը ժամանակին գործածութեան վայր հասցնելը:

6 Նշելով Վնասատուների դեմ պայքարող ընկերութեան սխտեմի բացարձակապես անբավարար աշխատանքը բամբակի վոչ-մորիխային վնասատուների և այլերի նուրբ բանջարանոցային կուլտուրաների վնասատուների դեմ պայքար կազմակերպելու գործում, պարտավորեցնել Անդրհողկոմատին և հանրապետական հողօգտագործողներին՝ քսան որվա ընթացքում

դեմ մշակել գյուղատնտեսութեան վնասատուների դեմ պայքարելու միջոցառումների սխտեմ, նախատեսելով աշխատանքների կազմակերպումն ու ծավալը, կիրառվող առանձին միջոցառումների արդյունավետութեանը, տնտեսարկների և վնասատուների դեմ պայքարող ընկերութեան սխտեմի փոխհարաբերութեանը, պայմանագրերը ժամանակին կնքելը և այլն:

7. ՄՏԿ-ների աշխատանքում առաջին տեղը դնել բերքատվութեան բարձրացման պայքարի խնդիրները, նրան յենթակազարմնելով ընթացիկ արտադրական աշխատանքը և կոնկրետ կերպով վերակառուցելով ՄՏԿ-ների աշխատանքը, յենթելով նրանից, փորձ «ՄՏԿ-ները պետք և կոլտնտեսութեանների ղեկավարները դառնան վոչ միայն տրակտորային տեխնիկայի կիրառման բնագավառում, այլև ագրոնոմիայի բնագավառում»: Պարտավորեցնել Անդրհողկոմատին, հանրապետական հողօգտագործողներին և տրակտորիկենտրոններին մեկ ամսվա ընթացքում մշակել ախպիսի միջոցառումների սխտեմ, փորձք ապահովել ինչպես ՄՏԿ-ների աշխատանքի վորակի բարձրացումը (հերի, վերանորոգում, պահեստի մասերի հայթայթում և այլն), ախպես և շրջանում նրանց աշխատանքի ճիշտ կազմակերպչական կառուցումը:

8. Անդրհողկոմատին և հանրապետական բամբակի կոմիտեին՝ մեկ ամսվա ընթացքում մշակել բամբակի բերքատվութեան բարձրացման միջոցառումներ: Վճռական միջոցներ ձեռք առնել 1932 թվի աշնանը կատարելու բամբակի հողերի աշնանափարի և ձմեռային արաթի սլանը հետևյալ չափերով (հաղարհակտարներով) .

| | ԱՍԽՀ | ՂՍԽՀ | ՎՍԽՀ | ԱՊՏԽՀ |
|-------------------------|-------|------|------|-------|
| Անանտվար | 137,5 | 7,5 | 8,0 | 153,0 |
| Ձմեռային արաթ | 96,4 | 6,0 | 5,7 | 108,1 |

9. Վրաստանի Հողօգտագործատին և «Չայ-Գրուզիա» ակցիոներական ընկերութեանը՝ մինչև 1932 թ. դեկտեմբերի 20-ը մշակել թեյի սլանտացիաների բերքատվութեան բարձրացման, նրանց վերանորոգման և խնամքի կոնկրետ միջոցառումներ:

10. Վրաստանի Հողօգտագործատին, Արխաղիայի Հողօգտագործող հետ միասին մինչև 1933 թ. հունվարի 1-ը մշակել ծխախոտի սլանտացիաների բերքատվութեան բարձրացման միջոցառումներ (Չերմոցային և սածիլային տնտեսութեան կազմակերպում, ցանքաշրջանառութեան կիրառում, ջիմիացում և այլն):

11. Անդրհողովումատին և հանրապետական հողօրդովումատներին՝

ա) մեկ ամսվա ընթացքում կազմել շրջանային ագրոմինիստներ պտղաբուծութան, խաղողաբուծութան և թթի տնկարանների գծով (վերականգնում, յերիտասարդացում, վերապատվաստում, խնամք, բուժում և այլն): Ապահովել ագրոմինիստներ իջեցումը մինչև կոլտնտեսութունն ու դյուղը, նրանց մշակումը լայն արտադրական խորհրդակցութուններում և նրանց կենսագործումը:

բ) անհապաղ կազմակերպել բոլոր միամյա կուլտուրաների գծով ընդունված շրջանային ագրոմինիստների վերանայում, նրանց մեջ մտցնել անհրաժեշտ լրացումներ և փոփոխութուններ, շաղկապելով շրջանների համար մշակվող ցանքաշրջանատուութունների հետ, աշխատանքն ավարտելով ամենաուշը 1933 թ. հունվարի 15-ին:

12. Պարտավորեցնել Անդրհողովումատին և հանրապետական հողօրդովումատներին 1933 թվին ասպահովել հացահատիկների սերմի զտումը 100 տոկոսով, ամբողջ վարակված սերմացուի օխտահանումը 100 տոկոսով, առավելագույն ընդգրկումը շարքացանով, բարձրացնելով մշակման նախացանքային աշխատանքների կատարման վորակը:

13. Հանրապետական հողօրդովումատներին՝ մինչև 1933 թ. հունվարի 1-ը մշակել կերային ցանքատարածութան (խոտացանում, սիլոսի համար անհրաժեշտ ցանքներ, կերային արմատապտուղներ) ընդարձակման պլանն ըստ շրջանների և նրանց բերքատվության բարձրացման, միջոցառումները՝ սեփական սերմի բազայի ստեղծման հաշվառումով, ինչպես նաև բնական հանդամասերի արտադրանքի ավելացման, արտավայրերի և խոտհարքների ռացիոնալ ոգտադործման պլանը:

14. Անդրհողովումատին՝ մեկ ամսվա ընթացքում մշակել լյուցերնային բույսերի սեփական սերմնարուծական բազայի կազմակերպման, խորհանտեսութուններում և կոլտնտեսութուններում լյուցերնային բույսերի սերմնարուծութան կազմակերպման միջոցառումների սխտեմ և ներկայացնել ԱՍՖՍՀ օրդովումատին ի հաստատութուն:

Գիտահետազոտական մասի գծով:

15. Անդրհողովումատին, հանրապետական հողօրդովումատ-

ներին և Գյուղատնտեսական դիտահետազոտական համամիութենական ասոցիացիայի Անդրկովկասյան բաժանմունքին՝

ա) մեկ ամսվա ընթացքում կարգավորել և հրատարակել ագրոտեխնիկայի հարցերի շուրջը կատարված դիտահետազոտական աշխատանքների արդյունքները:

բ) վերանայել դիտահետազոտական կազմակերպութունների ցանցի աշխատանքների ծրագրերը, առաջին տեղը դնելով ագրոտեխնիկայի հարցը (ցանքաշրջանատուութունները, սելեկցիան, տեսակների փորձարկումը և սերմնարուծութունը, պարարտացումը, դյուղատնտեսական արտադրության մեքենայացումը, մանր վոտոգման ցանցի շահագործումը, ջրի ոգտադործումը, ջրելունորմաները և այլն):

գ) դիտահետազոտական կազմակերպութուններին ասպահովել հենակետերի բավարար ցանցով, այդ կետերի աշխատանքն ագրոպերսոնալի միջոցով կապելով կոլտնտեսութունների և խորհուրտեսութունների հետ:

դ) 1933 թվին առաջին տեղը դնել դիտահետազոտական ինստիտուտների, զոնալ կայանների և հենակետերի աշխատանքի վորակի հարցը, վորպես կարևորագույն պրոբլեմ:

Անհրաժեշտ համարել 1933 թվին կազմակերպելու հացահատիկային կուլտուրաների զոնալ կայան ընկ. Որջոնիկիձեյի անվան հացահատիկային խորհանտեսութունում:

16. Հանրապետական կուսկենտկոմներին և հանրապետական հողօրդովումատներին՝ ագիտացիոն աշխատանք ծավալել ագրոտեխնիկան կոլտնտեսութուններում, չքավոր-միջակային դյուղատեխնիկան տնտեսութուններում, խորհանտեսութուններում արմատացնելու ուղղությամբ, բերքատվության բարձրացման հարցերը պարբերաբար լուսաբանելով հանրապետական և շրջանային մամուլում, կազմակերպելով բերքատվության բարձրացման հարցերի քննարկումը արտադրական խորհրդակցութուններում, լայնորեն ոգտադործելով կինոն, ռադիոհաղորդումները և բարձր բերքի հսկիչ պոստերը:

Բարձր բերքատվութուն ձեռք բերելու համար սահմանել փոխանցիկ դրոշակներ առանձին շրջաններում և կոլտնտեսութուններում: Մշակել և կիրառել մի շարք միջոցառումներ դիտահետազոտական ինստիտուտներն ու զոնալ կայաններն ոգտադործելու, պոպուլյար բրոշյուրների, պլակատների, թուղցիկների հրատա-

բազմամյա և այլ միջոցներով դիտակաճ նվաճումներն ու նրանց արդյունավետութունը մասսայականացնելու ուղղությամբ:

17. Անդրհողմիտներին և հանրապետական հողփողկոմատներին՝ հատուկ ուշադրություն դարձնել կոլտնտեսութուններում, խորհանտեսութուններում և ՄՏԿ-ներում ստորին մասսայական կադրերի պատրաստման գործի կազմակերպմանը, հատկապես պատրաստման վորակին, այդ նպատակով առավելագույն չափով ոգտադործել ձմեռվա ամիսները: Քսան որվա ընթացքում մշակել մասսայական կադրերի պատրաստման պլանը բոլոր սխառմաների, միավորումների և կազմակերպութունների գծով, դրա համար անհրաժեշտ միջոցները նախատեսելով պետական և տեղական բյուջեների հատկացումներից, ինչպես նաև տնտեսական որդանների և ազգաբնակչության միջոցներից:

18. Ժողովրդական կոմիսարների խորհուրդը և Համ Կ(բ)Կ Անդրյերկոմը պարտավորեցնում են ԱՍՑԽՀ-ի գյուղատնտեսութան ասպարիզում աշխատող բոլոր խորհրդային, կուսակցական, կոմյերիտական և տնտեսական կազմակերպութուններին իրենց աշխատանքը փոխադրել բերքատվության բարձրացման բնագավառը, վորպես սվյալ մոմենտում գյուղատնտեսութան գարգացման կենտրոնական խնդիր:

Հանրապետական ժողովրդային և կուսկենտկոմներին՝ տասն որվա ընթացքում ավանուել «Բերքատվության բարձրացման միջոցառումների մասին» Միութան Ժողկոմխորհի ու ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի ընդունած վորոշման և սույն վորոշման մշակումը բոլոր կոլտնտեսութուններում, խորհանտեսութուններում, ՄՏԿ-ներում և գյուղխորհուրդներում, բերքի համար պայքարելու նպատակով մորիլիզացիայի յենթարկելով կոլտնտեսականների և չքավոր-միջակային գյուղացիական տնտեսութունների լայն մասնակրին, ընդգմին հատուկ ուշադրություն դարձնելով առանձին կուլտուրաների և տեսակների վրա (յեգիպտական բամբակ, սամսոնի ծխախոտ, խաղողի մի քանի տեսակներ), այդ հարցերը շաղկապելով ընթացիկ աշնանացանի կամպանիայի կոնկրետ խրնգիրների և 1933 թվի գարնանացանի կամպանիայի նախապատրաստական աշխատանքների հետ:

ԱՍՑԽՀ Ժողովրդա ան կոմիսարների խորհրդի նախագահ
ՄՈՒՍԱԲԵԿՈՎ
ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմի քարտուղար՝ Լ. ԲՆԲԻՍ

ԱՄՐԱՅՆԵՆԲ ԱՍՖԻԳ-Ի ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՐՁԱՆՆԵՐԸ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԿ-ՆԵՐԻ. ՄԱՐՁԿՈՍՆԵՐԻ
ՅԵՎ ԵՐՁԿՈՍՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻՆ

ՅԵՎԻՐԱՅԻՆ կոմիտեյի՝ միթրման լիազորների գեկուցումները ասում են առանձին չրջանային կազմակերպութունների աշխատանքի ծայրաստիճան անբավարար դրության մասին:

Մի քանի չրջկոմներ մինչև այժմ ել կարճատեսութուն և կուրութուն են ցուցաբերում դասակարգային թշնամու նկատմամբ, չեն պայքարում կուլակային սաբոտաժի դեմ և յերևան չեն հանում նրա կազմակերպիչներին, տարվում են բարեհոգության և ինքնահանգստացման տրամադրութուններով: Առանձին չրջկոմներ կուլակի դեմ պայքարելու փոխարեն «ձախ խոտորումներ են թույլ տալիս միջակի և չքավորի նկատմամբ:

Չրջկոմների աշխատանքի մեթոդների մեջ տեղ-տեղ գերակըռում և վարչարարութունն ու հրամայելը, չկա բլիջների, խորհուրդների, ՄՏԿ-ների, կոլտնտեսութունների խսկակաճ հասկացողութուն և կոնկրետ գեկավարութուն: Առանձին չրջաններում ստորին կադրերի մեջ խցկվել են դասակարգայնորեն խորթ տարրերը: Ստորին աշխատողների մի մասի քաղաքական մակարդակը ծայրաստիճան ցածր է:

Մի քանի չրջանների կուսակցական և կոմյերիտական կազմակերպութունները ավանդարդային դեր չեն խաղում կոլտնտեսային արտադրության մեջ, համառ պայքար չեն մղում կոլտնտեսականների մի մասի հետամնաց տրամադրութունների դեմ, այլ յերբեմն ինքներն են դնում վերասերման հետամնաց տրամադրութունների պոչից: Կոլտնտեսական ակտիվը մի շարք չրջաններում չի կազմակերպված, ցաքուցրիվ է, թույլ է մասնակից դարձվում հիմնական տնտեսական-քաղաքական խնդիրների լուծման և գործնական կիրառման աշխատանքին:

Համ Կ(բ)Կ Անդրյերկոմի 1932 թ. գեկտեմբերի 15-ի վորոշման հիման վրա ամենուրեք աշխատանք է դնում գյուղական կազմակերպութունների ամրացման ուղղությամբ: Անդրյերկոմն անհրաժեշտ է համարում այս աշխատանքը շարունակել ամենայն յեռանդով, ձգտելով այդ աշխատանքի հիման վրա հաջողությամբ անցկացնել գարնանացանը:

Անդրյերկոմը գտնում է անհրաժեշտ առաջին հերթին կիրառել հետևյալ միջոցառումները:

1. Անհրաժեշտ է շարունակել համառ պայքարը կուլակի դեմ, արմատից վտնջազնելու այն բարեհոգությունն ու հաշտվողական տրամադրությունները, վոր նրանց հանդեպ ունեն կուլակազմակերպությունների առանձին ողակները: Հարկավոր է այս տեսանկյան տակ ստուգել ստորին կուստրզանների, խորհուրդների, կոոպերացիայի, հողորդանների, ստորին մամուլի աշխատանքը, մեր շարքերից անխնա դուրս նետելով կուլակի գործակալներին: Առանձին ուշադրություն ստուգել կոլտնտեսական կազմերը, վորոնց մեջ առանձին դեպքերում խցկվել են կուլակային տարրերը:

2. Անհրաժեշտ է ամբողջ աշխատանքում ուշադրություն կենտրոնակետ դարձնել գյուղական շրջանների ամրացման, գյուղի սոցիալիստական շինարարության այդ հանգուցային կենտրոնի ամրացման խնդրին: Հարկավոր է ուշի ուշով ստուգել բոլոր հետմնացող շրջանները և անհապաղ ամրացնել փորձված ու ստուգված կազմերով: Գյուղական շրջաններն ամրացնելու համար հարկավոր է վերցնել մի շարք լավադույն կուսակցական, խորհրդային, կոոպերատիվ ու տնտեսական աշխատողներ, մի շարք կուլտաշխատողներ, մասնագետներ: Հարկավոր է լայն չափով և առավելագույն բարձր վորակով ծավալել վողջ գյուղական ակտիվի քաղաքական և ագրո-տեխնիկական վերապատրաստման աշխատանքը: Հարկավոր է բոլոր դեկավար ինստանցիաների աշխատանքը վերակառուցել այնպես, վոր նրանք իրոք ճանաչեն յուրաքանչյուր շրջան, կոնկրետ ողնություն ցույց տան և հրահանգեն յուրաքանչյուր շրջանին (հրահանգիչների և արտադրական տերիտորիալ սեկտորների կազմի ամրացում, գյուղ ուղարկվող յուրաքանչյուր աշխատողի պատասխանատվություն, ինքնորմացիայի կազմակերպում):

3. Անհրաժեշտ է անհապաղ ստուգել և արմատապես ամրացնել յուրաքանչյուր ՄՏԿ-ի և խորհտնտեսությունների աշխատանքը, դարձնելով նրանց գյուղի տնտեսական և քաղաքական աշխատանքի իսկական հենարաններ:

4. Հարկավոր է պրոլետարական կենտրոններից յուրաքանչյուրի ուշադրությունը դարձնել գյուղի աշխատանքի խնդիրների կողմը: Քաղաքային կազմակերպություններում նկատվող ցե-

խային փակվածություն դեպքերը, գյուղի աշխատանքի հարցերն արհամարհելը պետք է անհապաղ արմատախիլ անել: Քաղաքային շրջանները պետք է խոշոր չափով ողնեն գյուղին նրա առաջ ծառայած խնդիրները լուծելու գործում:

Այս բոլոր մոմենտները, վորոնք շեշտված են Անդրյերկոմի 1932 թ. դեկտեմբերի 27-ի վորոշման մեջ գարնանացանի կամպանիայի հարցերի վերաբերյալ, պետք է անմիջապես կիրառվեն: Նրանց կիրառումն ուշացնելը բացահայտորեն դարնանացանի կամպանիայի վիժեցման վտանգ կսպառնա:

Ընկերական բարեներով

Անդրյերկոմի քարտուղար՝ Ժ. ՄենՅՁՈՆ

4

1933 ԹՎԻ ԲԼՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԼՍԻՆ

ԱՍՖԻՆԶ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ № 508 ՎՈՐՈՇՈՒՄԸ

Բամբակազորություն առաջին հնգամյակի հետևանքով ԱՍՖԻՆԶ-ում մեծ հաջողություններ են ձեռք բերված ինչպես ցանքատարածություն ընդարձակման, այնպես էլ բամբակի հումքի ընդհանուր արտադրանքի ավելացման բնագավառում: Սոցիալիստական հատվածը դարձել է բամբակի հիմնական արտադրող բամբակի արտադրանքի մոտ 80 տոկոսը տալիս են խորհանտեսությունները և կոլտնտեսությունները: Կազմակերպված է բամբակազորական 28 ՄՏԿ, 16,000 ձիու ուժից ավելի կարողություն բարակտորային պարկով:

Դրա հետ միասին, ԱՍՖԻՆԶ Ժողովրդական կոմիտեների խորհուրդը նշում է, վոր Անդրկովկասում բամբակազորություն զարգացման բնագավառում հիմնական թերությունն անցյալում հանդիսացել է այն, վոր միանգամայն անբավարար ուշադրություն է դարձվել բերքատվության բարձրացման համար տարվող պայքարի հարցերին: Անհրաժեշտ է 1933 թվին արմատական բեկում առաջացնել բամբակի բերքատվության բարձրացման գործում:

Գարնանացանի կամպանիան 1933 թվին պետք է անցկացնել վորակական ցուցանիշների բարելավման և առաջին հերթին բամբակի դաշտերի բերքատվության բարձրացման համար ծավալուն պայքար մղելու նշանաբանով:

Յեղևելով սրանից, ԱՍՖՆՀ ժողովրդական կոմիտեաների խորհուրդը վերոշում է.

1. Բամբակենու 1933 թվի ցանքատարածութունն Անդրկովկասում սահմանել 235.000 հեկտար հետևյալ բաշխումով.

| | Ընդամենը (հազար հեկ.) | Պորտնո. | Պայմանագր. հատվածում |
|----------------|--------------------------|---------|-------------------------|
| ԱՍՆՀ | 191,2 | 11,0 | 180,2 |
| ՀՍՆՀ | 25,8 | 0,3 | 25,5 |
| ՎՍՆՀ | 18,0 | 1,5 | 16,5 |
| ՍՖՆՀ | 235,0 | 12,8 | 222,2 |

Այդ թվում յեղևելու քանակն ԱՍՆՀ-ում վոչ պակաս, քան 15.000 հեկտ., վորից խորհանտեսութուններում՝ 7000 հեկտար և պայմանագրական հատվածում՝ 8000 հեկտ.:

2. Բամբակենու ցանքատարածութունն ըստ առանձին խորհանտեսութունների բաժանել հետևյալ կերպ.

Կարա-Չալա—4000 հեկտ.:

Միլի խորհանտեսութուն— 300 հեկտ.:

Կարայազի խորհանտեսութուն—1500 հեկտ.:

3. Սահմանել բամբակենու սածիլավոր կուլտուրայի հետևյալ ցանքատարածութունը (հեկտարներով).

| Հանրապետութուններ | Պորհանտես. | Կոտնտես. | Ընդամենը |
|-------------------|------------|----------|----------|
| ԱՍՆՀ | 50 | 500 | 550 |
| ՀՍՆՀ | — | 100 | 100 |
| ՎՍՆՀ | 30 | — | 30 |
| ՍՖՆՀ | 80 | 800 | 680. |

4. Ապահովել բամբակենու հարյուր տոկոսանի շարքացանք խորհանտեսութունների և կոլտնտեսական-գյուղացիական սեկտորի ամբողջ ցանքատարածութունում:

5. Կատարել բամբակենու ցանքատարածութունների պարարտացում՝ ա) հանքային պարարտանյութերով՝ 20,500 հեկտար (ԱՍՆՀ-ում՝ 14,200 հեկտ., ՀՍՆՀ-ում՝ 4800 հեկտ. և ՎՍՆՀ-ում՝ 1500 հեկտ.), այդ թվում խորհանտեսութուններում՝ 5800 հեկտ. (ԱՍՆՀ-ում՝ 5000 հեկտ., ՀՍՆՀ-ում՝ 300 հեկտ. և ՎՍՆՀ-ում՝ 500 հեկտ.):

բ) Գոմաղբի պարարտանյութերով՝ մինիմում 7000 հեկտ., վորից ԱՍՆՀ-ում՝ 6000 հեկտ., ՎՍՆՀ-ում՝ 1000 հեկտ.:

6. Սահմանել բոլոր ցանքատարածութունների պարտադիր ցաքանում ձմեռնային արաթից սկսած մինչև նախացանքային կրկնավարը և յերկու ցանցառացման, առնվազն յերեք ջաղհանի ու միջարքային կուլտիվացիայի կիրառում:

7. ԱՍՖՆՀ-ի կազմում մտնող հանրապետութունների ժողկոմխորհներին՝ հինգ որվա ընթացքում բաժանել ընդունված ցանքատարածութուններն ըստ շրջանների, միաժամանակ սահմանել մեքենայացման տոկոսը (տրակտորային աշխատանքներ) ՄՏԿ-ների ու խորհանտեսութունների գծով և հասցնել մինչև շրջաններն ու խորհանտեսութունները:

Նշելով սնանավարի ձմռան արաթի առաջադրութունների բացահայտորեն անբավարար կատարումը, ցանքաշրջանառության անցնելն ուշացնելը, վորը վիժեցման վտանգի տակ և դնում բամբակագործության առաջադրութունների կատարումն ընթացիկ տարում, կիրառել բամբակի ցանքի 1933 թվի պլանի կատարումն ապահովող հետևյալ միջոցառումները:

ԲԱՄԲԱԿԻ ՄԱՍԻՎՆԵՐԸ ՅԱՆԻՍԻ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

1. Առաջարկել ԱՍՖՆՀ-ի կազմում մտնող հանրապետութունների ժողկոմխորհներին՝

1) Պարտավորեցնել հողթողկոմատներին և տրակտորկենտրոններին սահմանելու ՄՏԿ-ների տրակտորային պարկի աշխատանքների ոպերատիվ պլան հնդորյակներով, առաջին հերկի որական առաջադրության պլանները հասցնելով մինչև ՄՏԿ-ներն ու առանձին կոլտնտեսութունները, աշանավարի պլանները ս. թ. հունվարի 20-ից վոչ ուշ լրիվ կատարելու հաշվով:

2) Պարտավորեցնել շրջգործկոմներին, ՄՏԿ-ներին և շրջանային հողբաժիններին վճռականորեն վերջ առ կենդանի քարշող ուժի թերազնահատմանը, վորպիսին կա աշանավարի կիրառման գործում, հաշվի առնել շրջանի ամբողջ կենդանի քարշող ուժը, վոր ազատ է բամբակի փոխադրումներից, և կազմել կենդանի քարշող ուժով վարելու կոնկրետ ոպերատիվ պլան, վարի որական առաջադրութունը հասցնելով մինչև կոլտնտեսութուններն ու գյուղերը:

3) Տասն որվա ընթացքում մշակել բամբակի դարնանային աշխատանքների մանրամասն պլան, բոլոր միջոցառումները և աշ-

1933
57



խառանքի ժամկետները դիֆերենցիալային յենթարկելով համաձայն շրջանների առանձնահատկությունների:

Պլանները կազմելիս հատուկ ուշադրություն դարձնել նախաջանքային և ցանքային շրջանների ադրոտեխնիկական աշխատանքների վորակին, վորոնք ապահովում են բարձր բերքատվությունը:

4) Պարտավորեցնել հանրապետություններին հողփողկոմատներին և արակտորկենտրոններին՝ կոլտնտեսական ակտիվի լայն մասնակցությունը ապահովել բամբակի վարի վորակի սխտեմատիկ ստուգումը և կատարել տալ վատորակ հերկված հողի պարտադիր կրկնավար:

5) Պարտավորեցնել հողփողկոմատներին և արակտորկենտրոններին կազմակերպել կոլտնտեսությունների կերային ռեսուրսների հաշվառումը և ապահովել բանող անասունների ֆուրաժային ֆոնդերի առանձնացումն աշնանավարի ու դարնանավարի և բամբակենու ցանքի շրջանում՝ կերի յեղած ռեսուրսների ռացիոնալ ոգտադործման ճանապարհով:

II. Բացառիկ քաղաքական տնտեսական նշանակություն տալով կոլտնտեսությունների արտադրական-ֆինանսական պլանները ճիշտ կազմելու գործին, պլաններ, վորոնք վորոչում են յուրաքանչյուր կոլտնտեսություն տնտեսական գործունեություն հիմունքները և կոնկրետ ծրագիր են հանդիսանում բարձր բերքատվություն և կոլտնտեսության կազմակերպչական տնտեսական մարզման համար պայքարելու գործում, ԱՍՖՈՀ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը պարտավորեցնում է խորհրդային, կոլտնտեսական և տնտեսական կազմակերպություններին կոնկրետ ողնություն ցույց տալ կոլտնտեսություններին այդ արդֆինպլանները կազմելու գործում:

Կոլտնտեսություններին, ՄՏԿ-ների և խորհտնտեսություններին արտադրական-ֆինանսական պլանները կազմելու աշխատանքը պետք է ընթանա վորպես հիմնական մասսայական տնտեսական-քաղաքական կամպանիա՝ վողջ կոլտնտեսական ակտիվի ու կոլտնտեսական լայն մասսաների առավելագույն ներգրավումով, և պետք է վերջանա կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում ու ՄՏԿ-ներում 1933 թվի փետրվարի 15-ին:

III. Հանրապետությունների Ժողկոմխորհներին պարտավորեցնել՝

1) Հողփողկոմատներին և արակտորկենտրոններին՝ դարկ տալ ՄՏԿ-ներին, խորհտնտեսություններին, կոլտնտեսություններին ու մենատնտեսների տրակտորներին և դյուղատնտեսական ինվենտարի վերանորոգմանը՝ այդ աշխատանքն անպայման վերջացնելով վող ուշ, քան ս.թ. մարտի 1-ը:

2) Հողփողկոմատներին և արակտորկենտրոններին՝ տասնորվա ընթացքում հաշվի առնել առկա պահեստի մասերը և հնարավորություն ստեղծել տեղական արդյունաբերություն միջոցով պատրաստելու տրակտորներին ու դյուղատնտեսական ինվենտարի պահեստող մասերը, պատվերները բաժանել առանձին կազմակերպությունների միջև, իսկ համապատասխան ձեռնարկություններին պարտավորեցնել ապահովելու այդ պահեստի մասերի ժամանակին պատրաստումը:

3) Հողփողկոմատներին և արակտորկենտրոններին՝ յուրաքանչյուր ՄՏԿ-ում հատուկ վորակյալ հսկիչ-խոտանիչների միջոցով խիստ հսկողություն սահմանել վերանորոգման վորակի վրա՝ արակտորների և դյուղատնտեսական ինվենտարի վերանորոգման պրոցեսում:

Վերանորոգման ժամանակին և լավորակ կատարման պատասխանատվությունը դնել անձնապես ՄՏԿ-ների և խորտնտեսություններին դերեկտորներին վրա, իսկ այն շրջաններում, վորտեղ ՄՏԿ-ներ չկան, շրջանային հողբաժիններին վարիչներին վրա:

4) Հողփողկոմատներին և արակտորկենտրոններին՝ անմիջապես ձեռնարկել մասսայական վորակավորման կադրերին (ՄՏԿ-ներին, խորհտնտեսություններին և կոլտնտեսություններին աշխատողներին) պատրաստմանն ու վերապատրաստմանը, ավարտելով վող ուշ, քան ս.թ. ապրիլի 1-ը:

5) Պարտավորեցնել Անդրբամբակիներին և արակտորկենտրոններին՝ ադրախառնումը կատարել դնման կայաններում, նախքան կոլտնտեսություններին բաժանելը:

IV. Առաջարկել Անդրհողփողկոմատին և Վնասատուններին դեմ պայքարող ընկերություն Անդրկովկասյան բաժանմունքին քսանորվա ընթացքում Անդրհողփողկոմխորհի հաստատություններին ներկայացնել բամբակենու վնասատուների դեմ պայքարելու աշխատանքների ծավալը, ապարատուրայի վերանորոգման որացուցային պլանը, ինչպես նաև ապահովել թույների և սլակասող ապարատուրայի ժամանակին փոխադրումը:

V. Անդրբաժնային ընկերություններին՝ վոչ ուշ, քան 1933 թ. փետրվարի 1-ը, Անդրհողմարի կոմսոմոսի հետ համաձայնեցնելուց հետո Անդրհողմարի կոմսոմոսի հաստատության ներկայացնել 1933 թ. վր. բաժնային բերքի կոնտրակտացիայի վերաբերյալ վորոշման նախագիծը:

ՋՐՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

I. Բամբակենու և լյուցերնայի համար սահմանված տարածությունների վորոշումը ջրով ապահովելու նպատակով հանրապետությունների ժողովուրդներին առաջարկել պարտավորեցնելու հողօգտագործներին, ջրատեսուցություններին և տրակտորկենտրոններին՝

1) Ընդունված տարածություններն ըստ ջրջանների բաժանելու և այդպիսիք տեղերում ջրհարկելու ապահովել տարածությունների լիակատար շահագործումը վորոշման ռեսուրսների առկայության և այլ դարձանացան կուլտուրաների ու բազմամյա սուկենների հաշվառման հետ, առաջին հերթին ապահովելով բամբակի ցանքերի տարածությունը:

2) Ապահովել կուլտուրաների վորոշման մանրամասն որացուցային սղանները կազմելու դործը ջրջաններում վոչ ուշ, քան 1933 թ. մարտի 15-ը, այդ սղանները հասցնելով մինչև առանձին գյուղերն ու կոնտեսուցությունները:

3) Ամեն կերպ դարկ տալ ձմռան արաթի համար սահմանված պլանների կատարմանը ջրջանային ջրատեսուցությունների և ՄՏԿ-ների միջոցով, այդ անսլայման վերջացնելով վոչ ուշ, քան 1933 թ. փետրվարի 1-ը:

II. Անդրհողմարի կոմսոմոսին՝ Անդրգիտահետադոտական տնտ. ինստիտուտի և Անդր. գիտ. հետ. բամբակ. ինստիտուտի մասնակցությունը քսան որվա ընթացքում սահմանել բամբակենու և լյուցերնայի վորոշման որիենտիր նորմաներն ու ժամկետներն ըստ ջրջանների և հասցնել մինչև հանրապետությունները:

III. Հանրապետությունների ժողովուրդներին՝ 1933 թ. փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ը (ըստ ջրջանների դիֆերենցիացիայի կատարելով) անցկացնել վորոշիչ սիտեմը մարելու և ջրարաշխական ցանցը նախապատրաստելու միամսյակ: Հանրապետությունների հողօգտագործներին՝ ջրատեսուցությունների և տրակտորկենտրոնների հետ միասին վոչ ուշ, քան 1933 թ. փետր-

վարի 5-ը մշակել վորոշման սիտեմները մաքրելու միամսյակի անցկացման կոնկրետ սղան և ապահովել նրա լայն քննարկումը կոնտեսուցություններում ու ջրավոր-միջակային տնտեսություններում:

IV. Ջրհանների վերանորոգումը վերջացնելու և լիակատար պատրաստություն մեջ դնելու ժամկետը սահմանել 1933 թ. մարտի 20-ը: ԱՍԽ Հ-ի ժողովուրդներին՝ պարտավորեցնել մեքենայական սարքավորման վերանորոգման սղատվերները կատարող ձեռնարկություններին և կազմակերպություններին խստիվ սահմանել վերանորոգումն ալարտելու ժամկետները և ապահովել նրա բարձր վորակը, միաժամանակ ձեռնարկությունների սլորոֆմիլով կազմակերպություններին առաջարկելով հատուկ հսկողություն տակ վերցնել ջրատեսական աշխատանքների սղատվերների կատարումը:

V. 1933 թ. վր. դարնան համար սիտեմների մանր և մանրադույն ցանցը մեքենայացման յենթարկված տնտեսությունը հարմարեցնելու (վորոշման քարտեզների խոշորացում) աշխատանքների ծախսը սահմանել առնվազն 40.000 հեկտ., վորից ԱՍԽ Հ-ում՝ 27.000 հեկտ., ՀՍԽ Հ-ում՝ 8000 հեկտ. և ՎՍԽ Հ-ում՝ 5000 հեկտ.: Պարտավորեցնել հանրապետությունների տրակտորկենտրոններին սույն աշխատանքն ալարտել վոչ ուշ, քան 1933 թ. ապրիլի 10-ը:

Հանրապետությունների ջրատեսուցություններին՝ այս աշխատանքում տեխնիկական աշակցություն ցույց տալ տրակտորկենտրոններին:

VI. Հանրապետությունների ժողովուրդներին պարտավորեցնել՝

1) Հողօգտագործներին ս. թ. մարտի 10-ի և 25-ի միջև ստեղծում անցկացնել հատուկ հանձնաժողովների միջոցով, թե ինչպես են կատարված ջրատեսական աշխատանքները և սիտեմներն ինչ չափով են սղատրաստված վորոշման համար: Ստեղծման և ընդունման ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել կատարված աշխատանքների վորակի վրա:

2) Ջրատեսուցություններին և տրակտորկենտրոններին՝ վոչ ուշ, քան 1933 թ. փետրվարի 1-ը կազմակերպել ջրային սիտեմների շահագործման տեխնիկական և ստորին անձնակազմի վերա-

պատրաստման դասընթացներ, մինչև վոռոգումներն սկսելը յուրաքանչյուր կոլտնտեսութեան ներսում կոլտնտեսականներէից պատրաստել վոռոգողներ խումբ՝ յուրաքանչյուր կոլտնտեսութեան ցանքերի վոռոգմանը բաւականացնող քանակութեամբ:

ՅԱՆՔԱՄԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՄԲԱԿԻ ՄԱՍԻՎՆԵՐԻ ԱՄՐԱՅՈՒՄԸ

1. Առաջարկել Անդրհողփոկումատին և հանրապետական հողփոկումատներին՝ «կոլտնտեսութեաններէ կայուն հողդատադորձում ստեղծելու մասին» ԽՍՀՄ կենտրոնական և Ժողկոմխորհի 1932 թ. սեպտեմբերի 3-ի վորոշման համապատասխան, մինչև ս.թ. մարտի 1-ը վերջացնել հողային մասիւններէ ամբողջութեամբ կոլտնտեսութեաններին:

2. Հանրապետական հողփոկումատներին և տրակտորկենտրոններին՝ տասն որվա ընթացքում հաստատել տիպային ցանքաշրջանառութեանները բամբակացան շրջաններում և կազմակերպել նրանց լայն քննարկումն ու մշակումը շրջաններում և կոլտնտեսութեաններում, ապահովելով ընթացիկ դարնանից դործնականորեն ցանքաշրջանառութեանն անցնելը:

3. Ընթացիկ տարվա դարնանը բամբակացան շրջաններէ կոլտնտեսութեաններում և խորհանտեսութեաններում լյուցերնացանելու առաջադրութեանը սահմանել հետևյալ չափով. ԱՍԽՀ — 16000 հեկտ., ՀՄԽՀ — 5500 հեկտ., ՎՍԽՀ — 5500 հեկտ.:

Հանրապետական հողփոկումատներին և «Սոյուզսեմնուխոյ»-ի հանրապետական բաժանմունքներին՝ ապահովել անհրաժեշտ քանակութեամբ լյուցերնայի փոխադրումն ու բաժանումը վոչ ուչ քան 1933 թ. ապրիլի 1-ը:

ՅԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ԳԾՈՎ

ԱՍԽՀ Ժողկոմխորհին պարտավորեցնել՝

1) ԱՍԽՀ Հողփոկումատին՝ Ադրբեջանի բամբակադործական տրակտորկենտրոնի հետ միասին և Անդրկովկասյան դիտահետազոտական բամբակադործական ինստիտուտի ու ազրոնոմ կրեմլեվայի մասնակցութեամբ տասն որվա ընթացքում յեղիպտական բամբակենու ցանքատարածութեան բաժանում կատարել ըստ շրջաններէ համապատասխան սահմանված ցանքատարածու-

թեաններէ, և ԱՍԽՀ Ժողկոմխորհի հաստատումից հետո անմիջապէս հասցնել շրջանները:

2) ԱՍԽՀ Հողփոկումատին և Ադրբեջանի բամբակադործական տրակտորկենտրոնին՝ հատուկ ուշադրութեան դարձնել յեղիպտական բամբակենու հողամասերի ընտրութեանը, առանձնացված հողամասերն ապահովելով աշնանավարով և ձմռան արաթով:

3) Ադրբեջանի բամբակադործական տրակտորկենտրոնին՝ 1933 թ. փետրվարի 15-ից Անդրկովկասյան բամբակադործական դիտահետազոտական ինստիտուտին կից կազմակերպել կարծատե գաւառնաքաներ յեղիպտական բամբակի դժով ազրոնոմներին և ազրոնոմներին վերապատրաստելու համար:

4) Հողփոկումատին՝ մինչև 1933 թ. փետրվարի 1-ը ըստ շրջանների սահմանել յեղիպտական բամբակենու մշակման ազրոնոմներին կական միջոցառումներ՝ հաշի առնելով շրջանի առանձնահատկութեանները և ապահովելով նրանց լայն քննարկումը կոլտնտեսութեաններում ու ՄՏԿ-ներում:

ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

1. Հանրապետական հողփոկումատներին և խորհանտեսութեաններէ դիրեկտորներին՝ հանրապետական աշխփոկումատներէ հետ միասին մշակել բանվորական ուժի բալանները բամբակացանի կամպանիայի բոլոր ետապների համար (վար, արաթ, մշակում), ինչպէս նաև մշակել խորհանտեսութեաններէ համար մշտական կազրեր ստեղծելու միջոցառումներ, և անհապաղ մաստայական աշխատանք ծախել բանուժի հովաքադրման ու կոլտնտեսութեաններէ հետ պայմանազրերի կնքման ուղղութեամբ, ճշտիվ սահմանելով խորհանտեսութեանները դալու և զնալու ժամկետները, աշխատավարձը և աշխատանքի նյութական-կենցաղային պայմանները:

2. Խորհանտեսութեաններէ դիրեկտորներին պարտավորեցնել կատարելու դաշտային և բանջարանոցային կուլտուրաների ցանքեր, վորոնք ապահովելու յեն հացամթերքների և բանջարեղենի պահանջը խորհանտեսութեաններէ բանվորների և ծառայողների մատակարարման համար:

3. Հանրապետական փոկումխորհներին՝ մինչև 1933 թ. մայիսի 10-ը ապահովել բանվորական շենքերի կառուցման ավարտումը բամբակա շրջանի համար, ինչպէս նաև բուժականայանների սարքավորումը խորհանտեսութեաններէ բոլոր խուտորներում:

4. Առաջարկել ՀՍԽՀ և ԱՍԽՀ ժողովոմխորհներին՝ մինչև ս.թ. մարտի 15-ը ապահովել Ղուերի ջրանցքի և Ս. Որջոնիկիձեյի անվան ջրանցքի կառուցումը այնպիսի չափով, վորպիսին անհրաժեշտ է Ղուերի և Միլի խորհանտեսություններում կատարվելիք ցանքսերի դարնանային ու ամառնային վորոգումն անխափան կատարելու համար:

ՍԵՐՄԱՌՈՒԾՄԱՆ ՅԵՎ ՍԵՐՄԱՑՈՒԻ ՄԱՍԻՆ

1. Առաջարկել հանրապետական հողժողովոմատներին վորչ ուչ, քան ս.թ. փետրվարի 1-ը Անդրհողժողովոմատին ներկայացնել 1933 թվի բամբակենու սերմացուի շրջանացման սլանները:

Անդրհողժողովոմատին՝ վերանայել և հաստատել այդ սլանները վորչ ուչ, քան ս.թ. փետրվարի 5-ը:

2. Առաջարկել Հանրապետական Գյուղ. ինստիտուտին՝ մինչև ս.թ. փետրվարի 1-ը վերջացնել և Անդրհողժողովոմատին ու հանրապետական հողժողովոմատներին ներկայացնել մանրամասն հաշվետվություն 1933 թվին ոգտագործելիք բամբակի սերմի վորակի և քանակի մասին:

3. Պարտավորեցնել Անդրբամբակիթերին՝ սերմացուի հումքի դտումն ավարտել վորչ ուչ, քան փետրվարի 15-ը, իսկ բամբակագործներին բաժանելու համար սերմացուն դնման կայանները փոխադրելը՝ վորչ ուչ, քան ս.թ. մարտի 15-ը, ամենավճռակառ միջոցներ ձեռք առնել թույլ չտալու խառնել թե՛ ամերիկական և թե՛ յեգիպտական բամբակենու դտվող սերմերի բուսարանական տեսակները, ապահովելով նրանց ճիշտ պահպանումը: Անդրկովկասյան պետական գյուղատնտ. ինստիտուտին՝ կանոնավոր հսկողություն սահմանել բամբակենու սերմերի ճիշտ պահպանման և տեսակների գործարանային դտման վրա:

ԱՍՖՈՀ Ժողովրդական կոմիտարների խորհուրդը պահանջում է բոլոր խորհրդային, կոլտնտեսական և տնտեսական կազմակերպություններից՝ անխնա փշրել կուլակային դիմադրությունն ու սարտատժը բամբակի բարձր բերքն ապահովող միջոցառումների կիրառման գործում, մերկացնել կոլտնտեսություններն ու խորհանտեսությունները խցկված կուլակային տարրերին և դրանով կազմակերպչականորեն-տնտեսապես ու քաղաքականապես

ամրացնել կոլտնտեսություններն ու խորհանտեսությունները, բարձրացնել ՄՏԿ-ները դերը, գյուղի բանվորական, կոլտնտեսական և շքավոր-միջակային լայն մասսաներին մորիլիդացլայի յեն-լարկելով բամբակագործության 1933 թվի սլանի բոլոր ցուցանիշները կատարման համար:

ԱՍՖՈՀ Ժողովրդական կոմիտարների խորհրդի
նախագահ՝ ՄՈՒՍԱՔԵՆՈՎ
ԱՍՖՈՀ Ժողովրդական կոմիտարների խորհրդի
գործերի կառավարչը՝ ՇԱՎԵՐԳՈՎ

13 հունվարի 1933 թ.
ԹԼՓԼԽ:

5

1933 ԹՎԻ ԳԱՐՆԱՆԱՑՄԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

ԱՍՖՈՀ Ժողովրդական կոմիտարների ԽՈՐՀԻ Խ 507 ՎՈՐՈՇՈՒՄԸ

Կուսակցության գլխավոր գծի կիրառման հիման վրա ԱՍՖՈՀ գյուղատնտեսությունը վերջին տարիներս զգալի հաջողություններ ձեռք բերեց. կոլտնտեսություններն ընդգրկել են գյուղացիական տնտեսությունների 41 տոկոսը, խորհանտեսությունների թիվը հասել է 300 միավորի, ԱՍՖՈՀ հիմնական գյուղատնտեսական շրջանները (բամբակի, ծխախոտի, թեյի և այլն) ընդգրկված են մեքենատրակտորային կայաններով: Ընդարձակվել է ցանքատարածությունը, մանավանդ տեխնիկական և արևադարձային մշակությունների դժով:

Դրա հետ միասին ԱՍՖՈՀ Ժողովրդական կոմիտարների խորհուրդը նշում է, վոր գյուղատնտեսության վորակական ցուցանիշները հետ են մնացել և անբավարար ուշադրություն է դարձվում բերքատվության բարձրացման ու անասունների արդյունավետության համար պայքարելու հարցերին:

1933 թ. դարնանացանի կամպանիայի կենտրոնական հարցը ԱՍՖՈՀ-ում պետք է լինի գյուղատնտեսության վորակական ցուցանիշների բարձրացումը—բերքատվության բարձրացման (ցանքասաչրջանառության մտցնելը, սերմացուի բարելավումը, հողի մշակման վորակի լավացումը, շարքացանի ընդարձակումը և այլն) և անասունների արդյունավետության ավելացումը:

Յեղնելով սրանից, ԱՍՖՈՀ Ժողովրդական կոմիտարների խորհուրդը վորոշում է.

1. 1933 թվի զարնանացան մշակույթների պլանը սահմանել 1,398 հազար հեկտ., հետևյալ կերպ բաժանելով ըստ հանրապետությունների և մշակույթների (հազար հեկտարներով) .

| Մշակույթներ | ԱՍԽՀ | ՀՍԽՀ | ՎՍԽՀ | ԱՍՖԽՀ |
|--------------------------------------|--------|--------|--------|--------|
| 1. Հացահատիկ | 129,66 | 246,98 | 525,95 | 902,50 |
| Այդ թվում՝ | | | | |
| Ցորեն | 20,0 | 138,4 | 50,0 | 198,4 |
| Գարի | 3,26 | 9,3 | 76,0 | 201,56 |
| Վարսակ | 5,4 | 2,7 | 2,4 | 10,5 |
| Կարմրացորեն | — | 18,6 | 4,7 | 2,3 |
| Չալթուկ | 27,0 | 0,3 | — | 27,3 |
| Կորեկ | — | 1,5 | 6,0 | 7,5 |
| Յեղիպացորեն | — | 0,58 | 385,0 | 385,58 |
| Այլ հաց-հատիկներ | 20,0 | — | 1,35 | 21,85 |
| Բակլազդիներ | 25,0 | 1,6 | — | 26,6 |
| 2. Տեխնիկական | 209,12 | 36,37 | 50,4 | 295,89 |
| Այդ թվում՝ | | | | |
| Բամբակ | 191,2 | 25,8 | 18,0 | 235,0 |
| Կենսաֆ | 3,0 | — | — | 3,0 |
| Հորովային կանեփ | 4,5 | — | 0,4 | 4,9 |
| Արախիս | 1,5 | — | 1,5 | 3,0 |
| Արևածաղիկ | 2,0 | 0,14 | 5,5 | 7,94 |
| Այլ ձվթաբույսեր | — | 0,17 | — | 0,17 |
| Շաքարի ճակնդեղ | — | 0,5 | 4,1 | 4,6 |
| Սխախոտ | 2,85 | 2,5 | 18,0 | 23,35 |
| Էֆիր և դեղաբույսեր | 0,07 | 0,06 | 0,9 | 1,03 |
| 3. Բանջարանոցային-պղտ | 42,17 | 17,5 | 31,75 | 91,42 |
| Այդ թվում՝ | | | | |
| Գեանախնձոր | 16,5 | 10,0 | 17,3 | 43,8 |
| Բանջարանոցներ | 16,0 | 6,3 | 17,8 | 40,1 |
| Բատատ | — | — | 0,15 | 0,15 |
| Պարտեզներ | 9,67 | 1,2 | 2,5 | 13,37 |
| 4. Կերային | 43,2 | 24,8 | 34,1 | 102,1 |
| Այդ թվում՝ | | | | |
| Միամյա խոտաբույսեր | 11,0 | 8,0 | 16,3 | 35,3 |
| Բազմամյա | 19,0 | 7,0 | 5,7 | 31,7 |
| Արմատապտուղներ | 1,5 | 1,2 | 1,5 | 4,2 |
| Սլոնային ցանքեր | 4,0 | 3,6 | 2,7 | 10,3 |
| Անցած տարիների խոտաբույսեր | 7,7 | 5,0 | 7,9 | 20,5 |
| Ընդամենը | 424,15 | 325,65 | 648,2 | 1398,0 |

Միջարքային ցանքերի տարածությունը (միակտուր ցանքով հաշված) սահմանել՝ ՎՍԽՀ-ում՝ ըստ լրբիացել՝ 25 հազ. հեկտ. և այլա՝ 25 հազ. հեկտ. :

Խորհանտեսությունների ցանքատարածությունն ընդհանուր ցանքատարածությունից սահմանել (հազ. հեկտ.) .

| | ԱՍԽՀ | ՀՍԽՀ | ՎՍԽՀ | ԱՍՖԽՀ |
|-----------------------------------|------|------|------|-------|
| 1. Հացահատիկ | 7,2 | 5,2 | 11,9 | 24,3 |
| 2. Տեխնիկական | 12,1 | 0,9 | 4,4 | 17,4 |
| Այդ թվում՝ | | | | |
| Բամբակ | 11,0 | 0,3 | 1,5 | 12,8 |
| Շաքարի ճակնդեղ | — | 0,3 | 0,6 | 0,9 |
| Սխախոտ | — | 0,25 | — | 0,25 |
| 3. Բանջարանոց և դեղանախ | 9,0 | 2,2 | 3,7 | 14,9 |
| 4. Կերային | 11,4 | 3,4 | 6,8 | 21,6 |
| 5. Այլք | — | — | 0,5 | 0,5 |
| Ընդամենը | 39,7 | 11,7 | 27,3 | 78,7 |

2. Բաղմամյա տունկեր անկելու պլանը վորոշել հետևյալ չափերով (հեկտարներով) .

| | ԱՍԽՀ | | ՀՍԽՀ | | ՎՍԽՀ | | ԱՍՖԽՀ | |
|--|----------|---------------------|----------|---------------------|----------|---------------------|----------|---------------------|
| | Ընդամենը | Այդ թվից խորհանտես. |
| Պաղղի այգիներ | 1000 | 350 | 460 | 380 | 1500 | 300 | 2960 | 1030 |
| Ասերիկական վորթատունկ | — | — | — | — | 30 | 250 | 350 | 250 |
| Պաղղառ աղբիներ | 800 | 300 | 760 | 560 | 720 | 160 | 2280 | 1020 |
| Ցլաբուս | 30 | 30 | — | — | 40 | 330 | 510 | 360 |
| Տնկարաններ | | | | | | | | |
| ա) պտուղի | 60 | 50 | 100 | 90 | 93 | 74 | 253 | 213 |
| բ) արևաղարձ. պտուղ | — | — | — | — | 2 | 4 | 12 | 4 |
| զ) ցլաբուսի | 3 | 3 | — | — | 26 | 26 | 29 | 29 |
| Թեյ | 25 | 25 | — | — | 880 | 180 | 905 | 205 |
| Տունդի (тунговое) ծառ | — | — | — | — | 250 | 250 | 250 | 250 |
| Ռսաթ | — | — | — | — | 600 | 300 | 600 | 300 |
| Ռամիի տն արաններ | — | — | — | — | 70 | 70 | 70 | 70 |
| Թիթի թփեր | 50 | 50 | — | — | 50 | 50 | 100 | 100 |
